ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, Եղեգիս համայնք, (093) 355759, shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՕԳՈՍՏՈՍԻ 2026թվականի N 200 Ա

ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՏԵՍՔԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 23-ը հուլիսի 2015 թվականի N828-Ն որոշման դրույթները, Վայոց ձորի մարզպետի 24/08/2026 թվականի N01/06.2/4804-2026 գրությունը (մտից՝ 1763) և ղեկավարվելով «Հողային օրենսգրքի» 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

Եղեգիս համայնքի Եղեգիս գյուղի վարչական տարածքում գտնվող Նարեկ Լևոնի Մկրտչյանի և Ստեփան Նայումի Նազարյանի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասի (կադաստրային ծածկագիր՝ 10-021-0021-0005 մակերեսը՝ 0,13048հա) գործառնական նշանակությունը փոխել հասարակական կառուցապատման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

2026 թ. օգոստոսի 25 ք.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, Եղեգիս համայնք, (093) 355759, shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՕԳՈՍՏՈՍԻ 2026թվականի N 201 Ա

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂՆՋԱՁՈՐ ԳՅՈՒՂԻ ՆԱԽԿԻՆ ԲՆԱԿԻՉ, ԶՈՀՎԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂ ԴԱՎԻԹ ՍԵՎԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԵՐՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետով և 48-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի և Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերի ու հատուկ ստորաբաժանումների՝ ֆունկցիոնալության խորը կամ ծանր աստիճանի սահմանափակումով հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող նախկին զինծառայողների և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների բնակարանային ապահովության կարգը և չափերը սահմանելու մասին» թիվ 1419-Ն որոշմամբ սահմանված կարգով, հիմք ընդունելով Եղեգիս համայնքի բնակարանային հարցերի հանձնաժողովի 2026 թվականի օգոստոսի 20-ի արձանագրությունը և Հասմիկ Արմենակի Մելքոնյանի 24/07/2026թ. գրավոր դիմումը (մտից 1547)

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Եղեգիս համայնքի Աղնջաձոր գյուղի նախին բնակիչ, զոհված զինծառայող Դավիթ Սևակ Գրիգորյանի ընտանիքին՝ Հասմիկ Արմենակի Մելքոնյանին (զոհվածի կինը), Սևակ Դավիթ Գրիգորյանին (զոհվածի որդին) ճանաչել բնակարանի կարիքավոր և վերցնել բնակարանային պայմանների բարելավման հաշվառման՝ հիմք ընդունելով հետևյալ հանգամանքները.

1)Կապիտան Դավիթ Սևակ Գրիգորյանը զոհվել է 10-ը հոկտեմբերի 2020 թվականին հակառակորդի նախահարձակ գործողության հետևանքով (ՀՀ ՊՆ Հանրապետական զինվորական կոմիսարիատի Վայոց ձորի մարզի զինվորական կոմիսարիատ, զինվորական կոմիսար փոխգնդապետ Գ. Գրիգորյանի կողմից 23/07/2026թ.-ին տրամադրված N 593/ԶՀԲ տեղեկանք):

2)Ներկա պահին Դավիթ Սևակ Գրիգորյանի, նրա կնոջ՝ Հասմիկ Արմենակի Մելքոնյանի և որդու՝ Սևակ Դավիթ Գրիգորյանի անվամբ Հայաստանի Հանրապետության տարածքում որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ (հիմք՝ ՀՀ Կադաստրի կոմիտեի 08/04/2026թ. N ԱՏ-08042026-99-0579 և 24/08/2026թ. N ԱՏ-24082026-99-0410 տեղեկանքները):

2.Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 1419-Ն որոշմամբ հաստատված կարգի 11-րդ կետով նախատեսված անհրաժեշտ տեղեկատվությունը սահմանված կարգով և ժամկետներում, ուղարկել համապատասխան մարմիններին:

3.Համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 6-ի N1419-Ն որոշման 15-րդ կետի սահմանված կարգով և ժամկետներում՝ բնակարանային պայմանների բարելավման ենթակա շահառուների ամփոփ ցուցակներն ուղարկել Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզպետի աշխատակազմ:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

5.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Եղեգիս համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

2026 թ. օգոստոսի 25 հ.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, Եղեգիս համայնք, (093) 355759, shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՕԳՈՍՏՈՍԻ 2026թվականի N 202Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՐԱԳԼՈՒԽ ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿԻՉ ԳԵՂԱՄ ԲԱԳՐԱՏԻ ԲԱԲԱԽԱՆՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի Քարագլուխ գյուղի բնակիչ Գեղամ Բագրատի Բաբախանյանը 2026թ.ընթացքում Քարագլուխ գյուղում սեփականության իրավունքով իրեն պատկանող 3-րդ փող 4-րդ հողամաս /կադաստրային ծածկագիր 10-044-0075-0002/ հասցեում գտնվող հողատարածքի վրա առանց համապատասխան թույլտվության կատարել է ինքնակամ շինարարություն՝ 93,5 քմ կենցաղային տուն շինության մի մասում մոտ 35 քմ տարածքով կատարել է շինության վերակառուցման աշխատանքներ, ինչով խախտվել են Հայաստանի Հանրապետության կառավարության <<Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին>> 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման պահանջները:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի պահանջներով, <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասով, 219.1-րդ և 305-րդ հոդվածներով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1.Հայաստանի Հանրապետության Կառավարության <<Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին >> 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշման պահանջները խախտելու համար Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի Քարագլուխ գյուղի բնակիչ Գեղամ Բագրատի Բաբախանյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ նշանակելով տուգանք սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

2.Առաջարկել Գեղամ Բաբախանյանին տուգանքը անձնական միջոցներից ոչ ուշ քան տասնհինգ օրվա ընթացքում մուծել Եղեգիս համայնքի բյուջեի 900 355 113 060 հաշվեհամարին:

3.Տուգանքը նշված ժամկետում չվճարելու դեպքում այն գանձել օրենքով սահմանված կարգով:

4.Որոշումն ուժի մեջ է մտնում պատճենը Գեղամ Բաբախանյանին հանձնելու հաջորդ օրվանից և կարող է գանգատարկվել դատական կարգով՝ երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

20<u>26</u> թ. <u>Օգոստոսի</u> <u>25</u>

Եղեգիս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, Եղեգիս համայնք, (093) 355759, shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՕԳՈՍՏՈՍԻ 2026 թվականի N 203Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՐԱԳԼՈՒԽ ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿԻՉ ՍԱՄՎԵԼ ՄԻՍԱԿԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի Քարագլուխ գյուղի բնակիչ Սամվել Միսակի Կիրակոսյանը 2026թ. ընթացքում Քարագլուխ գյուղի վարչական տարածքում սեփականության իրավունքով իրեն պատկանող 13-րդ փողոց 7-րդ հողամաս / կադաստրային ծածկագիր 10-044-0227-0035/ հասցեում գտնվող հողատարածքի վրա առանց համապատասխան թույլտվության կատարել է ինքնակամ շինարարություն՝ մետաղական կոնստրուկցիաներով կառուցել է ավտոլվացման կետ, ինչով խախտվել են Հայաստանի Հանրապետության կառավարության << Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին>> 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշման պահանջները:

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի պահանջներով, <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասով, 219.1-րդ և 305-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության կառավարության << Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին>> 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596 -Ն որոշման պահանջները խախտելու համար Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի Քարագլուխ գյուղի բնակիչ Սամվել Միսակի Կիրակոսյանին ենթարկել վարչական պատասխանատվության նշանակելով տուգանք սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

2.Առաջարկել Սամվել Կիրակոսյանին տուգանքը անձնական միջոցներից ոչ ուշ քան տասնհինգ օրվա ընթացքում մուծել Եղեգիս համայնքի բյուջեի 900 355 113 060 հաշվեհամարին:

3. Տուգանքը նշված ժամկետում չվճարելու դեպքում այն գանձել օրենքով սահմանված կարգով:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում պատճենը Սամվել Կիրակոսյանին հանձնելու հաջորդ օրվանից և կարող է գանգատարկվել դատական կարգով՝ երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

20 26 թ. Օգոստոսի 28

Եղեգիս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, Եղեգիս համայնք, (093) 355759, shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՕԳՈՍՏՈՍԻ 2026թվականի N 204Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԱՀՈՎԻՏ ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿԻՉ ՏԱՐՈՆ ՌԱՖԻԿԻ ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի Վարդահովիտ գյուղի բնակիչ Տարոն Ռաֆիկի Դանիելյանը Շատին գյուղում սեփականության իրավունքով իրեն պատկանող 1-ին փողոցից 1-ին փակուղի 1-ին հողամաս / կադաստրային ծածկագիրը 10-035-048-003-001/ հասցեում գտնվող հողատարածքի վրա առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի կատարել է ինքնակամ շինարարություն՝ այն է, վերակառուցել է գործող առևտրի կետը, ինչով խախտվել են Հայաստանի Հանրապետության կառավարության << Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին>> 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշման պահանջները:

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի պահանջներով, << Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասով, 219.1-րդ և 305-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության կառավարության<< Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին>> 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշման պահանջները խախտելու համար Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վարդահովիտ գյուղի բնակիչ Տարոն Ռաֆիկի Դանիելյանին ենթարկել վարչական պատասխանատվության նշանակելով տուգանք սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

2. Առաջարկել Տարոն Դանիելյանին տուգանքը անձնական միջոցներից ոչ ուշ քան տասնհինգ օրվա ընթացքում մուծել Եղեգիս համայնքի բյուջեի 900 355 113 060 հաշվեհամարին:

3. Տուգանքը նշված ժամկետում չվճարելու դեպքում այն գանձել օրենքով սահմանված կարգով:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում պատճենը Տարոն Դանիելյանին հանձնելու հաջորդ օրվանից և կարող է գանգատարկվել դատական կարգով երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

20 26 թ. օգոստոսի 25
Եղեգիս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, Եղեգիս համայնք, (093) 355759, shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 ՕԳՈՍՏՈՍԻ 2026թվականի N 205 Ա

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 07-Ը ՀՈՒՆՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 01Լ ՈՐՈՇՄԱՆ ԿԻՑ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 03-ը հուլիսի 2026 թվականի ««Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-404-Ն օրենքի 1-ին հոդվածով, 03-ը հուլիսի 2026 թվականի ««Համայնքային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-393-Ն օրենքի 1-ին հոդվածով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Եղեգիս համայնքի ղեկավարի 07-ը հունվարի 2025թ. «Եղեգիս համայնքի ղեկավարի 25-ը հուլիսի 2018 թվականի թիվ 118Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու և Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիսի համայնքապետարանի աշխատակազմի աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 01Լ որոշման կից հավելվածում «աշխատակազմի քարտուղար» բառերը համապատասխան հոլովաձևերով փոխարինել «աշխատակազմի ղեկավար» բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

2026 թ. օգոստոսի 31 ք.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, Եղեգիս համայնք, (093) 355759, shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 ՕԳՈՍՏՈՍԻ 2026թվականի N 206 Ա

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 21-Ը ՆՈՅԵՄԲԵՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 262Ա ՈՐՈՇՄԱՆ 1-24-ՐԴ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով 03-ը հուլիսի 2026 թվականի ««Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-404-Ն օրենքի 1-ին հոդվածով, 03-ը հուլիսի 2026 թվականի ««Համայնքային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-393-Ն օրենքի 1-ին հոդվածով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Եղեգիս համայնքի ղեկավարի 21-ը նոյեմբերի 2024թ. «Եղեգիս համայնքի ղեկավարի 12-ը հունվարի 2018 թվականի թիվ 02Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու և Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիսի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» թիվ 262Ա որոշման 1-24-րդ հավելվածներում «աշխատակազմի քարտուղար» բառերը համապատասխան հոլովաձևերով փոխարինել «աշխատակազմի ղեկավար» բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

2026 թ. օգոստոսի 31 ք.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, Եղեգիս համայնք, (093) 355759, shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 ՕԳՈՍՏՈՍԻ 2026թվականի N 207 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԱՎԱԳԱՆԻՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Սահմանադրական օրենքի 18-րդ հոդվածի 1-ին և 2.1 մասերով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 36-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջներով և հիմք ընդունելով տեղական ինքնակառավարման մարմինների 2026 թվականի հոկտեմբերի 25-ին կայանալիք համամասնական ընտրակարգով անցկացվող ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցի 11-րդ կետի պահանջը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1.Եղեգիս համայնքում Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի ավագանիների 2026 թվականի հոկտեմբերի 25-ին կայանալիք համամասնական ընտրակարգով անցկացվող ընտրությունների անցկացման համար սահմանել տեղամասային կենտրոններ՝ համաձայն հավելվածի:

2.Համայնքապետարանի աշխատակազմի ղեկավարին.

1)Մինչև 2026 թվականի սեպտեմբերի 12-ը սույն որոշման մասին տեղեկացնել լիազոր մարմին և տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետողին:

2)Մինչև 2026 թվականի սեպտեմբերի 12-ը ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի հաստատմանը ներկայացնել տեղամասային կենտրոնների ցանկը՝ նշելով տեղամասային կենտրոնների գտնվելու վայրը, ինչպես նաև տեղամասային կենտրոնների և քվեարկության սենյակների բնութագրերը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

2026 թ. օգոստոսի 31 ք.Եղեգիս

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի ղեկավարի 2026
թվականի օգոստոսի 31-ի թիվ 207Ա որոշման

ՑԱՆԿ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԱՎԱԳԱՆԻՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ

Մարզ	Համայնք	Բնակավայր	Հասցե
Վայոց ձոր	Եղեգիս	Աղնջաձոր գյուղ	Մշակույթի տուն , գ.Աղնջաձոր, փ. 3, շ. 1
Վայոց ձոր	Եղեգիս	Արտաբույնք գյուղ	Մշակույթի տուն, գ.Արտաբույնք, փ.1, շենք 4
Վայոց ձոր	Եղեգիս	Գողթանիկ գյուղ	Մշակույթի տուն, գ.Գողթանիկ, փ.4, շ.2
Վայոց ձոր	Եղեգիս	Եղեգիս գյուղ	Մշակույթի տուն, գ.Եղեգիս, 3-րդ փողոց, շ. 1/1
Վայոց ձոր	Եղեգիս	Թառաթումբ գյուղ	Մշակույթի տուն, գ.Թառաթումբ, փ.2, շ.2
Վայոց ձոր	Եղեգիս	Հերմոն գյուղ	Հիմնական դպրոց, գ.Հերմոն, Սիրանեսի փ., շ. 7
Վայոց ձոր	Եղեգիս	Հորբատեղ գյուղ	Մշակույթի տուն, գ.Հորբատեղ, Կենտրոնական փ., շ.16
Վայոց ձոր	Եղեգիս	Հորս գյուղ	Մշակույթի տուն, գ.Հորս, փ.2, շ.4
Վայոց ձոր	Եղեգիս	Շատին գյուղ	Միջնակարգ դպրոց, գ.Շատին, փ.2, շ.17
Վայոց ձոր	Եղեգիս	Սալլի գյուղ	Հիմնական դպրոց, գ.Սալլի, փ. 2, շ. 3
Վայոց ձոր	Եղեգիս	Վարդահովիտ գյուղ	Հիմնական դպրոց, գ.Վարդահովիտ, փ. 7, շ. 4
Վայոց ձոր	Եղեգիս	Քարագլուխ գյուղ	Մարզամշակութային կենտրոն, գ.Քարագլուխ, փ. 6. շ. 2

Եղեգիս համայնքի ղեկավար Արթուր Ստեփանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, Եղեգիս համայնք, (093) 355759, shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2026թվականի N 208 Ա
ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՏԵՍՔՆ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի պահանջներով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 43-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջներով

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

Եղեգիս համայնքի Աղնջաձոր գյուղի վարչական սահմաններում գտնվող բնակավայրերի նշանակության այլ հողատեսքը գրանցել որպես առանձին միավոր համայնքային սեփականություն.

Կադաստրային ծածկագիր 10-007-0021- , մակերեսը 0,1895հա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

2026 թ. սեպտեմբերի 2 ի Եղեգիս